ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **16/05/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Պետրոսյանը, Անահիտ Գևորգյանը, Սաշա Ստեփանյանը, Կարինե Աբելյանը, Հենրիկ Սուքիասյանը, Լուսինե Բաբայանը, Միշիկ Ղազարյանը, Հասմիկ Ազոյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Սուսաննա Սահակյանը, Հրանտ Արշակյանը, Դավիթ Այվազյանը, Նունե Օրդուխանյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Մանուչարյանը, Նարեկ Հովսեփյանը, Երվանդ Եղիազարյանը, Արմեն Խաչատրյանը, Դավիթ Մարգարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգը հաստատելը համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ անհրաժեշտ է օրակարգ ներառել ևս 1 հարց՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Սոցիալական տաքսի» ծառայության տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը: Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը քվեարկեց ձեռնպահ:

Հարցը ներառվեց օրակարգ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2025 թվականի մայիսի 16-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 34-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 014-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Սոցիալական տաքսի» ծառայության տրամադրման կարգը հաստատելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 054-Ա)*

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը քվեարկեց ձեռնպահ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 124-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 124-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2751523.5 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «եկամուտների գծով՝ 2767021.5 հազար դրամ» բառերով և թվով:
2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 4480171.8 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «ծախսերի գծով՝ 4495669.8 հազար դրամ» բառերով և թվով:
3) որոշման 1-ին կետի հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1-ից 3 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանը մանրամասն ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխություններն ու լրացումները: Վերջում նշեց, որ որոշման նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի երկամուտներն ու ծախսերը կավելանան 15498000 ՀՀ դրամով:
Ավագանու անդամ Բ. Թամարզովան հարցրեց, թե որտե՞ղ է տեղադրվելու հուշաքարը:
Համայնքի ղեկավար Հ. Առաքելյանը պատասխանեց, որ երաժշտական դպրոցի շենքի դիմաց տեղադրված է Հունաստանի Նեա Զմիրնի քույր քաղաքի հուշակոթողը, որոշել են Յուքոմի դիմացի հատվածում էլ տեղադրեն Ֆրանսիայի Մոնտելիմար քույր քաղաքի բարեկամության հուշաքարը, քանի որ հունիսի 3-ին սպասում են իրենց պատվիրակությանը:
Հ. Հակոբյանը հարցրեց, որ 1-ին կետով նշել է, մանկապարտեզների տեխնիկական վիճակը ստուգելու մասին, կուզեր որ ավելի մանրամասնել, թե քանի քառակուսի է, հաշվարկը ո՞նց է կատարել: Եվ եթե տեխնիկապես չի բավարարում շենքի պայմանները, ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու:
Մյուս հարցը, վերաբերվում է գլխավոր կամրջի ուսումնասիրմանը:
Դ. Այվազյանը պատասխանեց, որ թվով 4 մանկապարտեզներն են, ամբողջ շենքի համար տրվելու է սեյսմիկ եզրակացություն, յուրաքանչյուր շենքի համար կազմում է մոտ 195000 ՀՀ դրամ, իսկ եթե տալիս է, որ բավարար չի, հետագա ընթացքում նախագծողը վերանորոգման համար նախագիծ կազմելիս պետք է ուժեղացում տա:
Համայնքի ղեկավարը կամրջի վերաբերյալ պատասխանեց, որ ուսումնասիրվել է և քննարկում են ինչքան գումար պետք է նախատեսեն, որ ավագանու նիստին հարցը ներկայացնեն:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 055-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու

մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման 13-րդ հավելվածը լրացնել 32-րդ և 33-րդ տողերով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
32	Բելառուսի տրակտորավար	5	5	104000	520000
33	Կոմբայնավար	1	1	104000	104000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀԿ խմբակցության անդամ Ա. Սուլեյմանը հարցրեց, թե ի՞նչ կոմբայն է:
Հ. Առաքելյանը պատասխանեց, որ հացահատիկ քաղող կոմբայն է, որը գտնվում է Գորայք բնակավայրում և վարորդի հաստիք են ավելացնում, որ աշխատանքները կարողանան կատարեն:
Ն. Յազուլյանը հարցրեց, թե կարո՞ղ են մասնավոր տնտեսվարողները դիմեն:
Հ. Առաքելյան – Այո:
Հ. Հակոբյանը ներկայացրեց, որ այդ կոմբայնը պայմանագրով և վարձավճարով տրվել էր անհատի, եթե համեմատում եք արդյո՞ք այդքան ցածր 104000 ՀՀ դրամ աշխատավարձով աշխատող կլինի և 12 ամիս աշխատավա՞րձ է ստանալու:
Հ. Առաքելյանը պատասխանեց, որ աշխատող կա, նվազագույն աշխատավարձ են սահմանել և սեզոնային աշխատանք է կատարելու, նաև հավելավճար է ստանալու:
Հարցը դրվեց քվեարկության:
Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 056-Ա)*

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը քվեարկեց դեմ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու

մասին» թիվ 34-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ն. Հովհաննիսյանը մանրամասն ներկայացրեց կատարվող փոփոխությունները և նշեց, որ հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետում տեղի է ունեցել վրիպակ «երեք և ավել անչափահաս երեխա ունեցող անապահովների ընտանիքները» բառերը փոխարինել «չորս և ավել անչափահաս երեխա ունեցող անապահովների ընտանիքները» բառերով: Հավելեց նաև, որ մինչև 2024թ. նոյեմբեր ամիսը եղել է դրամական օգնության աջակցություն, հիմա դա կիրարկման մեջ չէ, կունենան սննդի աջակցության քարտ 50000 ՀՀ դրամի չափով, հագուստի և կոշկեղենի համար՝ 30000 ՀՀ դրամ, հիգիենիայի և դեղորայքի համար քարտ՝ 20000 ՀՀ դրամի:

Երկար քննարկումներից և հարց ու պատասխանից հետո որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 057-Ա)*

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը քվեարկեց դեմ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 014-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 014-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 342-ից 353 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 058-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի հունիսի 13-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 059-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՔՍԻ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Սոցիալական տաքսի» ծառայության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Կարապետյանը զեկուցեց, որ Սիսիանի համայնքապետարանը «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից հայտարարված ենթադրամաշնորհային մրցույթի շրջանակներում ճանաչվել է հաղթող և ստացել 15498000 /տասնհինգ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար/ ՀՀ դրամ դրամաշնորհ համայնքում «Սոցիալական տաքսի» ծառայություն ներդնելու նպատակով, ուստի անհրաժեշտություն է առաջացել մշակել և հաստատել այդ ծառայության տրամադրման կարգը՝ որպես համայնքի կամավոր խնդիր, ինչի լուծումը պետք է իրականացվի համայնքի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում առաջարկվում է սահմանել այն ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում «Սոցիալական տաքսի» ծառայության տրամադրման գործընթացը:

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը հարցրեց, թե ո՞վ է աշխատել այս փաստաթղթի վրա, որքա՞ն ժամանակ և ինչո՞ւ եք լրացուցիչ ներառում հարցը:

Ա. Կարապետյանը պատասխանեց, որ օրենքը չի արգելում, իսկ համայնքի ղեկավարը ավելացրեց, որ եթե թողնեին մյուս նիստով ավելի կուշանար:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 060-Լ)*

Ավագանու անդամ Հ. Հակոբյանը քվեարկեց ձեռնպահ:

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ ____________________

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը ____________________